

նալ, որոնց ժամանակ հրեղէն ալիքները գիպչում են երկրի կեղևին և սաստիկ տապալում նորան: Բայց բանը նրանումն է որ «ուրիշ ծովերը» ալիկոծում են և փոթորիկ ունենում ոչ այն պատճառով որ «ծով» են, այլ այն պատճառով որ օղը տեղափոխւելով չուժկու խփում է նորա մակերևութին. արդեօք երկրի ներսում էլ նոյն պատճառից է ալիկոծւում կրակահեղանիւթ լաւայի ծովը—կը հարցնի ընթերցողը:

Թարգմանութիւնը ընդհանրապէս ծանր է և չունի այն կենդանութիւնը ինչ նկատւում էր «Պատիկ է բայց չստիկ է» գրքովում: Տեղ տեղ թարգ.

մանիչը բառացի է հետևել ռուսական ձեռագրին. օրինակ Էտնա լեռուը—ГОРА ЭТНА—որ ռուսերէն իգական սեռին է պատկանում, ալս հարադատ թարգմանութեան մէջ էլ իւր սեռը պահպանել է «գեղեցկուհի Էտնա» դառնալով:

Ընդհանրապէս, ինչպէս «Պատիկ է բայց չստիկ է» գրքովի առիթով նկատել էինք, պ. Նունկեվիչին չաջողում է ժողովրդականացնել բնագիտական նիւթեր, ուստի ցանկալի է որ Նաչարունակի լրացնել ալ՝ բովանդակութեամբ շատ պակասաւոր ճիւղը մեր ժողովրդական գրականութեան մէջ. Լ. Ս.

ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ. ԻԻՐԵԻ., Թարգմանութեամբ Մ. Սատաթեանի.—
ԴԵԻՏ, արևելեան վիպասանութիւն: Թիֆլիս, տպարան Արօր Տ.
Նազարեանցի: Հրատարակութիւն 50 «Աղբիւր» և «Տարազ» հանդէսների: Քառածալ, 57 երես, տառ № 12. գինն է 30 կոպէկ:

Առհասարակ դժւար բան է օտար լեզուից մի գեղարուեստական գրւածք թարգմանել. Աւելի ևս դժւարանում է գործը, երբ գեղարուեստական բովանդակութիւնը արտաբնական է ոտանաւոր ձևով: Պէտք է ոչ միայն ճիշտ և գեղարուեստորէն փոխադրել բնագիրը, այլ և պահպանել հեղինակի տաղաչափական ոճը: Աւելացրէք դորա վերաջ Լերմոնտովի ոտանաւորի բլրեղանման գեղեցիկ, ամփոփ ու կտրուկ ոճը և հակակաւն տաղաչափութեան անմշակ դրութիւնը Սատաթեանի թարգմանելու ժամանակ և կը տեսնէք, թէ ինչ դժ-

ւարութիւնների պէտք է չաղթէր և րիտասարդ թարգմանիչը:

Ասել, թէ Սատաթեանը բոլոր դժւարութիւններից չաղթող է դուրս եկել,—սխալ կը լինէր: Կան, ճիշտ է, աղբիւրի չափազանցութեան մէջ ընկնողներ, բայց ալ պէտք է վերադրել գլխաւորապէս այն հանգամանքին, որ նրանք երևի թարգմանութիւնը չեն համեմատել բնագրի հետ: Իսկ Սատաթեանի թարգմանութիւնը արժէր և պէտք էր համեմատել բնագրի հետ, որովհետև շատ լաւ թարգմանութիւն է, ոչ այնպիսի թարգմանութիւն, որ ամբողջապէս

անլաջող կտորներից ու կոպիտ սխալներից է կազմւած, ինչպէս առհասարակ լինում է մեղմում, ալ արեւելի թարգմանութիւն, որի անլաջող տեղերը պէտք է փնտռել և կարելի է մէկ-մէկ թւել:

Ես ալք համեմատութիւնը տող առ տող արեցի և համոզեցի, որ կան արեւելի հատւածներ, որոնց թարգմանութիւնը կարելի է կլասսիկական համարել, բայց կան և անլաջող կտորներ ու մինչև անգամ սխալներ:

Թարգմանութեան քննադատութեանը չ'անցած մէկ-երկու խօսք ասեմք հրատարակութեան մասին. ինչ ասել կուզի, որ շատ լաւ բան է արել հրատարակիչը, որ առանձին գրքովով տպագրել է ալք հիանալի բանաստեղծութեան դեղեցիկ թարգմանութիւնը, ալն էլ գեղեցիկ թղթի վերալ, մաքուր տիպով և բանաստեղծի բաւական չափով պատկերով. բայց չի կարելի չը նկատել, որ նոյնքան, եթէ ոչ աւելի, ուշադրութիւն պէտք էր դարձնել և հրատարակութեան բովանդակութեան վերալ,— աղաւաղել լեռմոնտովի հրաշալի ոտանաւորը կէտադրութեան կամ տառա-սխալով՝ անճեղքելի լանջանք է:

Ահա մեր նկատած տպագրական սխալները. Ներկորդ մաս:

«Ներկորդան արդէն ծածկել էր բոլոր

Թանձր մռայլ օդեղէն քօղով».

գլ. է, եր. 27) :

Պէտք է լինի—«մռայլ»:

«Անարիւն սրտումս նորից վառեցաւ

«Անսպառելի կաթը ջերմութեան

գլ. ժ. երես 33) :

Պէտք է լինի—«անսպառելի»:

«Եւ մերթ քարի պէս մետաքս է ճնշում» (գլ. ժ. երես 38) :

Պէտք է լինի—«միտքս»:

«Նա (Աստուած) դբաղած է երկ-
նի ու երկրի

Եւ մեղ նախելու ժամանակ չունի (գլ. ժ. երես 38) :

Պէտք է լինի—«Նա զբաղած է
երկնի, ու երկրի..»

„ОНЪ ЗАВЯТЪ НЕБОМЪ, НЕ ЗЕМЛЕЙ!“

«Հակատիցք ընդ արժանաւոր

Նրկնալին հրոյ հետքը կը սրբեմ».
(գլ. ժ. երես 42) :

Պէտք է լինի—«հակատից»:

«Գուցէ չը գիտես, թէ արդեօք
ի՞նչ է

կարճատև կեանքը մարդկալին
սեռի,

Միայն արիւնի նա վրդովմունք է».
(գլ. ժ. երես 43) :

Պէտք է լինի—«մարդկալին սէրի»:
Ահա ուղղութիւնը՝

„Иль ты не знаешь; что такое
Людей минутная любовь?—

Возненье крови молодое!“

Կէտադրութեան բաղմամբիւ սխալ-
ներից մի օրինակ բերեմք.

«Վաղուց է միտք» միշտ չիոթ-
ւելով

Քաղցր անունի լսում էր ինձ
ձայն

Նբբ որ դրախտում երջանիկ էի,
իմ համար պակաս դու էիր միայն».

(գլ. ժ. երես 34) :

Այստեղ երկրորդ տողի վերջում

պէտք է միջակէտ լինի, որ հասկաց-
ւի, թէ երրորդ տողը կապւած է չո-
րրորդի և ոչ թէ երկրորդի հետ:

Հօ չալտնի է թէ ստորակէտից

մարդուս կեանքը կարող է կախած լինել:

Առհասարակ կէտադրութեանը սրբագրիչները պէտք է արհամարհանքով չը վերաբերեն,— „ПОВѢСИТЬ НЕ НАДО, ПОМИЛОВАТЬ!“ ստորակէտը տեղափոխելով կարելի է չինել— „ПОВѢСИТЬ, НЕ НАДО ПОМИЛОВАТЬ!“

Անցնենք թարգմանութեանը: Ինչպէս ասացի կան հատւածներ, որոնց թարգմանութիւնը կարելի է կլասսիկական համարել: Աղպիսի հատւածների մէջ, մեր կարծիքով, առաջին տեղն է բռնում առաջին մասի ամբողջ է. գլուխը, որ կարող է մրցել բնագրի հետ և որ արժէ աստեղ ամբողջապէս բերել:

«Վկայ է աստղը կէս գիշերալին, Վկայ են ելքն ու մուտքն արևու, Որ ոչ մի իշխան պարսից աշխարհին
Չէ տւել համբոյր ալդպէս աշերու: Տաք օրերի մէջ, ոչ մի ժամանակ Հով շատրւանը Շահի հարէմում
Չէ գովացրել ալդպիսի հասակ
Մարգարտանման ցօղոյն իւր փալուն:

Դեռ ոչ մի անգամ երկրալին ձեռներ
Չեն հիւսել ալդպէս գեղեցիկ մաղեր:
Քանի որ դրախտը աշխարհից գնաց,
Երդւում եմ որ դեռ, ոչ մի ժամանակ,
Աղպէս գեղեցիկ մի կոյս չէ ծաղկած

Հարաւու կողմի արեգական տակ»: Շատ գեղեցիկ են թարգմանւած առաջին մասում հետեւեալ գլուխները:

Դ. սկսած «կեանք, չքեղութիւն»:
Ե, Ձ, Է, ԺԲ, ԺԳ և ԺԶ:

Երկրորդ մասի թարգմանութիւնը ընդհանրապէս աւելի թուլ է. բայց ալդտեղ էլ կան հիանալի կտորներ:

Բ. գլխում անաջող են միայն վերջին երկու տողը.

«Հրապուրում էր նորան, գէպի իւր
Կոչում էր նորան... բայց ուր»:

Գ. գլուխը ամբողջապէս լաւ է, բաւական լաւ են Ձ և Թ գլուխները:

Ժ գլխում կլասսիկական կերպով է թարգմանւած Դևի երդումի սկիզբը մինչև՝

«Եւ քեզ ընտրելով սրբուհի ինձ
նոր,

Իշխանութիւն ոտքիդ տակ գրի», և վերջը սկսած՝

«Եւ սպասաւոր իմ հօգիների
Բոլոր ամբողջ ոտքդ կը բերեմ»:

Նախ քան անաջող կտորներին անցնելը, չիշենք, որ թարգմանութեան մէջ պակաս են զանազան գլուխներում հետեւեալ տողերը.

Մասն առաջին.

Ա. գլուխ.— Когда бѣгущая ко-
мета

Улыбкой ласковой привѣта
Любима помѣняться съ нимъ»:

Պէտք է կարծել, որ այս տողերը թարգմանւած են եղել, բայց տպագրութեան մէջ անհոգութեամբ բաց են թողնել: Աղպէս կարծելու հիմք է տալիս այն, որ—

«Երբ, Քերութէի պէս, էր նա
լուսաւոր

Աշխարհի անմեղ բնակարանում»:

Տողերը չ'ունեն իրանց համապատասխան լանգուղ տողեր, որոնցից մէկը, երեի, թարգմանութեան մէջ

վերջանում է (ասողը) գիտաւոր
րաւով:

Գ. գլուխ.—Վերջին երկու տողը.

«И на челѣ его высокою»

Не отразилось ничего».

ԺԴ. գլուխ.—«Въ послѣднемъ
бѣшенемъ пожатъ»

Рука на гривѣ замерла».

Երկրորդ մասն.

Ժ. գլուխ.—Եր. 38—«Այս մերթ
քարի պէս միտքս է ճշում»... տողից
չետով չեն թարգմանած երկու տող՝

«Надеждѣ погибшихъ и страстей
Несокрушимый мавзолей!»

ԺԳ. գլուխ.—Символъ премуд-
рости туманной,

Глубокихъ думъ забытый слѣдъ».

ԺԵ. գլուխ.—Պօէմի վերջում—

«Այստ վաղուց է, որ չիրիմներին»...

տողից առաջ պակաս են չորս տող.

«Услыша вѣсти въ отдаленѣ»

О чудномъ храмѣ въ той странѣ,

Съ востока облака однѣ

Спѣшатъ толпой на поклоненье;»

Թարգմանութեան բոլոր անվաղող

տեղերը մէկ-մէկ թւել ավերորդ կը

լինի,—կը բերեմ միայն մի քանի:

օրինակներ:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

XI.

„Но презрѣлъ молодой же-
нихъ

Обычай прадѣдовъ своихъ“.—

XV.

„Твоя слеза на трупъ безгласный

Живой росой не упадетъ;

Она лишь взоръ туманитъ ясный,

Лавиты дѣвственныя жетъ!“

ԺԱ.

«Իսկց մատաղ փեսան հեռա-
ցաւ ակօմ

Իւր նախահարբրի սովորութիւ-
նից»:

ԺԵ.

(Մի թափեր ցողերը քո պարզ
այքերի),

«Դիակի վերալ անբարբառ ու լուռ
երբէք չեն բն կել նորա կեն-

դանի:

Նորա պարզ ալքեր մթնացնում
են,

Կուսական ակտեր միայն ակում
են»:

Անվաղող է թարգմանած այդ
գլխում, մեր կարծիքով,—«На воз-

душномъ океанѣ...» բառերով սկսող
ամբողջ հրաշալի հատւածը:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

VII.

„И звуки тѣ лились, лились,

Какъ слезы, мѣрно, другъ за

другомъ“;

Է.

«Ձայներ՝ անընդհատ լցւելով
լցան

Մէկ մէկու չեանից արտօսրի նման»:

„И чудо! изъ померкшихъ глазъ
Слеза тяжелая катится...
Повынь възлѣ кельи той
Насквозь прожженный виденъ
камень

Слезою жаркою какъ пламень,
Не человѣческою слезой...“!

VШ

„...Съ душой открытой для
добра...“

„...Страхъ неизвѣстности нѣмой“

Փ. գլխով ամենաուժեղ, պա-
թետիք տեղերը անկաշոյ ե՛ն թարգ-
մանւած, եթէ չը հաշւենք երդումի
սկիզբն ու վերջը, որ առաջ վիշե-
ցիւնք: Ահա օրինակներ...

„Я тотъ, кого никто не любить,
Но все живущее влываетъ...“

Тебѣ принесть я въ умиленьи
Молиству тихую любви,
Земное первое мученье
И слезы первыя мои.

„Но злобы мрачныя забавы
Не долго правилися мнѣ“.

„...За стѣной высокой...“

„Оставь же прежнія желанья
И жалкій свѣтъ его судьбѣ...“
«Ես նա եմ ահա...»

XII.

„...Бродилъ съ чугунной доской“.

Մի քանի տողեր սխալ են թարգ-
մանւած, Ահա իմ նկատած սխալ-

I.

„Не зналъ ни страха, ни сом-
нѣнья...“

«Եւ ինչ հրաշք էր, որ աչքիցն աղօտ
Իսկույն թափեցա՜ն ջերմ արտասուքը.
Եւ մինչև ցայտմունն իսկ խուցի մօտ
Կա՛յ արտասուքից արւած քարը»:

«Մինչև բարութեան հոգին նւի-
րած...»

«Մի ահ ու սարսափ անկատ, ան-
մեկին...»

Որ մինչև ցալսօր ոչ ոք չէ
սիրում,

Որ բոլոր աշխարհ անիծա-
նում է...

Բեբեկ եմ ահա խանդաղատագրին
Իմ մեղմսախառն (1) սիրույ խըն-
դիրը:

Քեզ արտասուքս բերի առաջին,
Եւ իմ առաջին երկրալին կիրքը»:

«...Բայց տխուր խաղերը չա-
րագործութեան

երկար ժամանակ ինձ հա-
ճուց չեղան»:

«Բարձր պատի տակ...»

«Ճակատագրին թող ղու ուրեմն,
Թշուառ աշխարհը, իղձերզ նախ-
կին»:

ԺԲ.

«Կոչնակի հետն էր շրջում միա-
սին»:

Ները: Առաջին մասում:

Ա.

«Չը գիտէր կասկած, ոչ ոխ չա-
րութեան»:

II.

„И зло наскучилио ему...“

Բ.

«Նա շար գործերից զգւեցաւ
իսկոյն...»

III.

„И глубоко внизу чертѣя,
Какъ трещина, жилище змѣя,
Вился излучистый Дарьялъ“.

Գ.

«Եւ ահա Դարեաւ գետը գալա-
րուն,
Մի օձաբնակ ճեղքւածքի նման,
Լեռների ներքև խորին անդգում
Ներկում է սև-սև մի շերտիկ
երկայն».

Դարեաւը կիրճ է և ոչ թէ գետ.
Դարեաւի մէջուղ հոսում է Տերեկ
գետը, որի նկարագրութիւնը իսկոյն
նշանում է այդ տողերին:

„Слѣдя мелькающія волны“

«Վալլուն ալիքները նկատում
էին...»:

Տերեկը այդտեղ «փալլուն» չի.
МЕЛЬКАТЬ կը նշանակի ալքի առա-
ջից արագ-արագ անցնել:

IV

„Роскошной Грузин долины
Ковромъ раскинулись вдали“.

Դ.

«Լայն հովիտները պերճ վրաս-
տանի
Բնութեան շքեղ գորգով ծած-
կեցան»:

VI

То вдругъ помчится легче пти-
цы...“.

Ջ.

«Թռչունից թռթկ վեր վալր է
ոսանում...»:

«Լեզգիների մէջ կնոջ կողմից վեր
վալր թռչելը չի գովում, ալ, ընդ-

հակառակը, պահանջում է որ պարը
սահուն լինի:

VIII

„Въ послѣдній разъ она плясала...
Увы! завтра ожидала
Ее, наследницу Гудала,
Свободы рѣзвое дитя,
Судьба печальная рабыни...“

Ը.

«Հուզալի ժառանգ մի հատիկ
դուստրը
վերջին անգամն էր, աւանդ, կա-
քաւում,
Ազատութեան առուգ մահուկը
Սպասում էր նորան վաղ առա-
ւոտուն.
Սպասում էր նորան... ողբալի
օրհաս...»:

Հացական ԺԵՂԱ (մանուկին) |
Թարգմանիչը կարծել է ուղղական
(մանուկը) և անպէս է դուրս եկել

իր թէ «աղատութեան առողջ մա-
նուկը» ոչ թէ Թամարի համար է տու-
ած, այլ նորա փեսացուի:

XIV

«Хранили слѣдъ тревоги
бранной
Морщины смуглаго чела».

ԺԴ.

«Որի խորշումած թխադուն դէմքը
Ձեռքնում էր սարսափանք
ու վախ»:

Մի քիչ առաջ (գլ. ԺԱ) հեղի-
նակը գովել էր իշխանին—«իշխան
անվհեր», «արծւի նման». պարզ է,

որ тревога բառը սխալ է Թարգ-
մանում:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՈՒՄ

Գ. գլխում пороѣ (երբեմն) Թարգ-

մանում է—միշտ:

VП.

«Онъ подвѣлъ взоръ: ея окно,
Озарено лампадой, блещетъ;
Кого-то ждетъ она давно».

Է.

«Տեսաւ, որ կուսի սիրուն աչ-
քերը
Կանթեղի լուսից փալատակում
են,
Եւ կարծես նոքա մինի գա-
լուտը
Անհամբերութեամբ վաղուց սպա-
սում են»:

Հեղինակն ասում է, որ Դեր
չըջիւով պարսպի մօտ տեսնում էր
կուսի լուսամուտը, իսկ Թարգմանիչը
ստիպում է նրան տեսնել կուսի աչ-

քերը, որ նա դժար թէ կարողա-
նար տեսնել: Բացի դրանից՝ ինչու
«կարծես»:

X.

«И тайно вдругъ возненавидѣлъ
Безсмертіе и власть мою...
...Не жить, какъ ты, мнѣ
стало больно...
И страшно—розно жить съ
тобой.
...И я людьми не долго правилъ,
Грѣху не долго ихъ училъ;
Все благодородное безславилъ

Ժ.

«Յանկարծ ես իմ մէջ կարծես
ատեցի
Իմ անմահութիւն ու իշխանու-
թիւնը:
Չապրեւի իմ համար ցաւալի
թաւ:
Ապրելն առանց քո անեղ երեցաւ:
...Իսկ մարդոց վերաջ սակաւ իշ-
խեցի»:

И все прекрасное хулилъ,
 Не долго... Пламень чистой
 вѣры
 Легко навѣкъ я залилъ въ нихъ...
 ...Надежда есть: ждетъ пра-
 вый судъ;
 Простить онъ можетъ, хоть
 осудить!
 ...О, пощади!... какая слава!..
 На что тебѣ душа моя!
 ...Какъ здѣсь, пхъ дѣйстви-
 тельное ложе...
 Не смято смертнаго рукой!»...

Սակաւ ուսուցի նոցա մեղք գոր-
 ծել,
 Շատ ուշ ժամանակ բարին
 ատենցի,
 Սիրուն էակները արհա-
 մարհեցի:
 Սակաւն հեշտութեամբ նոցա
 մէջ լցի
 Մաքուր հաւատով բոցը լաւ-
 տեան...
 ...Յոյս կալ, կը լինի արդար դա-
 տաստան.
 Թէպէտ և անշուշտ կը դատա-
 պարտէ.
 Գոնեա կարող է ներել, թէ կամի:
 ...Ոհ, խնայիք ինձ... ինչ փառք
 ինձ համար,
 Քեզ ինչ է պիտոյ իմ հոգին
 թշուառ...
 Քանի աչստեղ են, դեռ ոչ մի
 անգամ
 Մահկանացուի ձեռք չէ մօտեցած
 Անկողիններին նոցա կուսական...

«Զ'ապրել» կը նշանակի մեռնել, իսկ «չ'ապրել քեզ նման» կը նշա-
 նակի—չ'ապրել ահպէս ինչպէս դու
 ես ապրումս—«Ուշ ժամանակ» և
 «կարճ ժամանակ» բոլորովին տարբեր
 մեքեր են արտապատումս. «Սակաւն»
 միտքը փոխում է.—Դեռ նրա համար
 է կարճ ժամանակ աչդ գովելի գոր-
 ծերով դրադել, որովհետև շատ
 հեշտութեամբ է հանգցրել (ե ոչ
 թէ «լցրել») մարդկանց մէջ հաւատի
 բոցը.—«Արդար դատաստանը» «ան-
 շուշտ դատապարտել» չի կարող հէնց
 աչն պատճառով, որ արդար է—Թա-
 մարի հոգին զժողովի բաժին գարձ-
 նելը, եթէ փառք համարւէր, կարող

էր համարւել Դևի համար և ոչ մի
 ղէպքում Թամարի համար.—Թամարը
 Դևից հարցնում է, թէ ինչով է իւր
 հոգին աւելի թանկ նրա համար քան
 ուրիշ կոյսերի հոգիները, որոնց
 անկողիններին, ինչպէս իւր անկող-
 նին («ինչպէս աչստեղ»), դեռ ոչ մի
 մահկանացուի ձեռք չէ մօտեցած.
 իսկ Թարգմանութիւնից ահպէս է
 հասկացում, որ Թամարը խօսում է
 իւր վանքի կոյսերի մասին և աչն էլ
 ահպիսի կոյսերի, որոնց անկողինն,
 քանի վանքումն են (իսկ առանջ)
 դեռ ոչ մի անգամ մահկանացուի
 ձեռք չէ մօտեցած:

XV.

Съ одеждой брэнною
земли
Оковы зла съ нея ниспали.

ԺԵ.

«Թամարի վրայից չարի կապանքը
Ընկան հագուստի հետ ի
միասին»:

Խօսքը «հողեղէն հագուստի» աշխարհը մարմնի մասին է և ոչ թէ հասարակ հագուստի:

Թարգմանութեան ալջ պակասութիւններին պէտք է աւելացնել և ալն, որ «ինչ, ահա, իսկոյն, արդէն, կարծես» և ալն ալջպիսի խօսքեր աւելորդ գործ են ածոււմ ոտը կամ չանգը տեղը բերելու համար:

Մի պակասութիւն էլ ունի ալժմ թարգմանութիւնը, որի վերաբերմամբ թարգմանիչը ամենեւին մեղաւոր չէ: Թարգմանութեան մէջ չաճախ պատահում են հնացած, գրաբառ ձևեր, բառեր, որոնք ալժմ արխարիզմ են և ականջ են ծակում, օրինակի համար. «Անցանել, իջանել, հարկանել, հեծանել, տեսանել, մտանելիս արեւուն ի մայր, անիծանել, հասանել, թողուլ, զգենուլ, թռուցանել, դարձոց, կուրացոյց, պիտոյ է, աղօթք առնել, առաջինքը, դաշնակ (թրի մտքով), վէս, կիրք (տանջանքի մտքով), եռանդուն (տաքի մտքով) և ալն:

Ահա Սատաթեանի թարգմանութեան պակասութիւնները, որոնք աւելի քան հաւասարակշռում են նորա հազազիւտ արժանաւորութիւններով:

Վերջացնելով մեր նկատողութիւնը պէտք է ասենք, որ ընդհանրապէս խօսելով ալջ թարգմանութեան գլխաւոր արժանաւորութիւնն է ալն, որ թարգմանիչը ամ-

բողջ պօէմում պահպանել է հեղինակի ոճը, հաւատարիմ է մնացել բնագրին առանց բառացի թարգմանութեան ծայրակողովեան հասնելու և միևնույն ժամանակ զրել է բուն հալկական ոճով: Պօէմը թարգմանութեան մէջ ընթերցողի վերաջնոյն տպաւորութիւնն է գործում, ինչ որ բնագրում, եթէ չը հաշենք մի քանի հատաձներ, որ թարգմանիչը չի կարողացել ալն ուժով արտայայտել, որ չատուկ է Լերմոնտովին: Ալջ ցաւալի է մանաւանդ ալն պատճառով, որ ուժը Լերմոնտովի մեծ տաղանդի բնորոշ չատկութիւնն է: Նիթէ Պուչկինի գրաւորներում ընթերցողին գրաւում է պատկերների գեղեցկութիւնը, Լերմոնտովի բանաստեղծութիւնները կախարդում են նրան վեհ (գրանդիօզ) պատկերներով և բուն զգացմունքներով: Դրան համապատասխան տարբերում է և նրանց տաղանդի արտաքին կողմը, — Լերմոնտովի ոտանաւորը ալնքան գողտրիկ չէ որքան Պուչկինինը, բայց աւելի զօրեղ է:

Ահասարակ կարելի է նկատել, որ Սատաթեանը աւելի լաւ է թարգմանել ալն կտորները, ուր ոչ ալնքան ուժ, որքան գեղեցկութիւնը նշանակութիւն ունի: Նիթէ հաշտենք նրա հետ, որ Սատաթեանի ոտանաւորը չունի ալն ուժը, որ չատուկ է Լերմոնտովին, պէտք է ասենք, որ տաղանդի կողմից Սատաթեանը բոլո-

րովին արժանաւոր թարգմանիչ է լինելով իսկապէս, մարդ զարմանում է կարողալով Սատաթեանի թարգմանութիւնը, — ճիշդի ոչ մի հետք, Ոտանաւորը ալեքան սահուն և ազատ է, որ, կարծէք, թարգմանչի համար ամենաթեթև բանն է եղել որոշեալ մտքերի ու պատկերների արտապատկութիւնը տաղաչափութեան պահանջներին չարմարեցնելու Դեռ աւելի, կարծէք նա ամենին չի էլ աշխատել չարմարեցնել, այլ ինչն ինքն իրան է կազմել ոտանաւորը:

Այս բոլորը աչքի առաջ ունենա-

լով, մեր կարծիքով, մեծ համարձակութիւն կը լինի ձեռնարկել Դեռ երկրորդ թարգմանութեանը, համարձակութիւն, որ կարող է արդարացնել միայն կատարեալ լաջողութիւնը, Բայց այդ բաւական անհաւանական է: Մեր կարծիքով, աւելի լաւ կը լինէր, եթէ մեր երիտասարդ բանաստեղծներից մէկը խմբագրէր Սատաթեանի թարգմանութեան անլաջող մասերը և փոփոխէր հնացած ձևերը ի հարկէ խմբագրողը տաղանդի թէ աստիճանի և թէ բնաւորութեան կողմից բաւական մօտ պէտք է լինէր Սատաթեանին: